

Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում («ՆՁԱԿ» ՊՈԱԿ) Մտավոր սեփականության համաշխարհային օրվան նվիրված կազմակերպվում է ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանում առկա տեղեկատվական նյութերի «Մտավոր սեփականության դերը նորարարության և ստեղծագործական մտքի առաջնդման գործում» թեմատիկ ցուցահանդես (առցանց և գրադարանում):



Ապրիլի 26-ը Մտավոր սեփականության համաշխարհային օրն է

2016 թ. կանցկացվի «Ստեղծագործական միտքը թվային միջավայրում: Մշակույթի վերախմաստավորում» կարգախոսի ներքո

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության գլխավոր ասամբլեան 1999թ. հոկտեմբերի նիստում նման տոն հիմնելու մասին որոշում է ընդունել: Ապրիլի 26-ը պատահական չէր ընտրված. այդ օրը հիմնվել է WIPO-ն՝ կազմակերպություն, որը կոչված է նպաստել ամբողջ աշխարհում մտավոր սեփականության պահպանմանն ու զարգացմանը <http://www.wipo.int/ip-outreach/en/ipday/> :

Մտավոր սեփականության համաշխարհային օրը հնարավորություն է ընձեռում ընդգծել մարդու առօրյա կյանքում և հասարակության կատարելագործման հարցում նորարարությունների նշանակությունը:

Արտոնագրերը, սպրանքանիշերը, հեղինակային իրավունքը և հարակից իրավունքները, որպես ստեղծագործության և գիտելիքների արդյունք, հանդիսանում են համաշխարհային հանրության մշակութային և տնտեսական զարգացման հզոր գործիքներ:

Հայաստանը 1993թվականից Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության եւ 1995թվականից՝ Եվրասիական արտոնագրային կազմակերպության անդամ է: ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Մտավոր սեփականության գործակալության խնդիրն է Հայաստանում ապահովել մտավոր սեփականության օբյեկտների իրավական պահպանությունը:

- 1 [ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանում առկա մտավոր սեփականության վերաբերյալ ամսագրեր և էլեկտրոնային նյութեր](#)
- 2 [«Մտավոր սեփականության դերը նորարարության և ստեղծագործական մտքի խրախուսման գործում» թեմայով գրականության մատենագիտական ցանկ](#)
- 3 [Այլ տեղեկատվական աղբյուրներ](#)

Ներկայացված ամսագրերի հոդվածների լիատեքստ տարբերակները կարող եք պատվիրել [փաստաթղթերի էլեկտրոնային առարման](#) ծառայության էլեկտրոնային փոստով՝ edd@innovcentre.am, հեռախոս՝ (011)235620 կամ այցելել ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարանում գործող թեմատիկ ցուցահանդես, հասցե՝ Երևան, Կոմիտասի պող., 49/3, 5-րդ հարկ, 504 սենյակ, հեռախոս՝ (011) 236754:

Այցելելով ՆՁԱԿ-ի գիտատեխնիկական գրադարան կամ կատարելով թեմատիկ որոնում [գրադարանի էլեկտրոնային գրացուցակում](#), ինչպես նաև ծանոթանալով [գրադարանի բաժանորդագրության ցանկին](#) և [լիատեքստ տվյալների բազաներին](#) կարող եք օգտվել ձեզ հետաքրքրող գրականությունից:

«ՆՁԱԿ» ՊՈԱԿ

<http://www.innovcentre.am>, <http://facebook.com/InnovCentre>

Հասարակայնության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման բաժին